քական ու դիւանագիտական աշխարհում բանակցութիւնները աննպատակ, հետեւաբար՝ ձրի, չեն լինում երբեք։ Կողմերը առաւել կամ նուազ չափով պահանջներ են ներկայացնում եւ իւրաքանչիւր կողմ աշխատում է նուազագոյն զիջման փոխարէն ձեռք բերել առաւելագոյն շահ։ Պէտք է ա՛յս տեսանկիւնից նայել նաեւ այս բանակցութիւնների վրայ։

Ստեփանոս Սալմաստեցին, իր Հռոմ հասնելու օրուանից, չլացուցիչ յայտարարութիւններ էր արել՝ պապին հնազանդուելու և Հայ Եկեղեցին լատինականին ենթարկելու իմաստով։ Բայց նմանօրինակ գործերը լոկ յայտարարութիւններով չէ, որ լինում են։ Այդ յայտարարութիւնների իրացման ճանապարհի վրայ կային երկու ուրոյն հանգրուաններ։ Առաջինն այն էր, որ բանակցող կաթողիկոսը ինքն անձամբ համաձայնութեան եզրեր գտնէր Լատինական Եկեղեցու ներկայացուցիչների հետ. իսկ երկրորդն այն էր, որ նա, իր երկիրը վերադառնալով, իր գլխաւորած եկեղեցու հաւանութիւնն ու համաձայնութիւնը ապահովէր Հռոմում իր կատարած բանակցութիւնների արդիւնքների հիման վրայ։

Այս հաշուով՝ Հռոմում Սալմաստեցու կատարած բանակցութիւնները դեռ կրում էին նախնական ու պայմանական, եւ բոլոր դէպքերում՝ անհատական, բնոյթ։ Այդ բանակցութիւնների համար էական նշանակութիւն ունեցող կէտերից մէկը պապի հանդէպ նրա անձնական հպատակութեան (ապագայի առումով) արտայայտութիւնն էր, որ նա կարող էր կատարել նոյնիսկ առանց իր եկեղեցու պաշտօնական հաւանութեան, եւ նա կատարել էր այդ, որպէսզի բացուէր բանակցութիւնների դուռը։ Այդպիսի նշանակութիւն ունեցող կէտերից մէկն էր նաև դաւանական հարցը եւ հայոց կաթողիկոսը կարող էր դրանում եւս չզգալ որեւէ կաշկանդուածութիւն, քանի որ դաւանականի էութիւնը հիմնականում ամփոփուած էր երկու եկեղեցիներում ընդունուած Նիկիական հանգանակի սահմաններում. իսկ երկու բնութեան վարդապետութեան հարցում, որին այնքան մեծ նշանակութիւն էին տալիս Հռոմում, Սալմաստեցին կարող էր անայլայլօրէն յայտարարել, թէ Հայ Եկեղեցին արդէն միշտ էլ դաւանում էր Քրիստոսի մէջ «անխառն և անշփոթ միացմամբ» երկու բնութիւն[4]։ Սալմաստեցին իր այս յայտարարութիւններով Հայ Եկեղեցու համար պարտադիր յանձնառութիւններ չէր ստեղծում. բայց դրանք, ի հարկէ, լատինական կողմի համար ունէին առաջնակարգ նշանակութիւն և Վատիկանը, բանակցութիւնների այսպիսի սկզբնաւորութեամբ բաւարարուած, իր կողմից առաջին քայլն էր անում հայկական կողմի պահանջներին ընդառաջելու ուղղութեամբ։ Յուլիոս Գ պապը 1550 թ. ապրիլ 25 թուագրուած յանձնարարական երկու նամակներ է յանձնում Սալմաստեցուն, նամակներ՝ ուղղուած Գերմանիայի Կարոլոս Ե կայսրին եւ Լեհաստանի Սիգիսմոնդ Բ Աւգոստոս թագաւորին. այդ երկու նամակներում, որոնք նոյն բովանդակութեամբ էին, պապը նրանց յանձնարարում էր լսել հայոց կաթողիկոսի խնդրանքը[5]։

Այսքանը, սակայն, բանակցութիւնների համար առաջին հանգրուանն էր կազմում։

Երկրորդ հանգրուանի համար դռները բաց էին թողնուած Սալմաստեցու կող-

---

[4] Այս մասին տեսնել մեր յօդուածը՝ «Ներսէս Շնորհալին եւ Արմատ Հաւատոյ ժողովածուն», Էջմիածին, 1973, № 12, էջ 84-85։

Բեն. Հերբեստը, որ շատ մօտիկից է ծանօթ եղել Լեհաստանի հայերին եւ նրանց կրօնական ըմբռնումներին, 1566 թուականին գրում էր, թէ «նրանց քահանաների հետ ունեցած խօսակցութիւններից չկարողացանք հասկանալ ուրիշ բան, քան այն, որ հայերը, թէեւ տարբեր ծէսով, մեզ հետ դաւանում են նոյն հաւատը», «վերջապէս տեսանք նրանց հաւատոյ դաւանութիւնը եւ նրանում չպատահեցինք որեւէ բանի, որը լինէր նուազ ուղիղ. հաւատի կողմից հայերը միաբան են մեզ հետ եւ իրենք իսկ ընդունում են այդ» (տես B. Herbest, «Wypisanie drogi», *MLUR*, vol. 5, p. 4-8. Հմմտ. PChA p. 148-149)։

[5] Archivum Secretum Vaticanum, Minutae Brevium Iulii PP. III, Arm. 41, t. 55, № 363. Հմմտ. ՊՍՍ էջ 21. PChA p. 93 e 108 (լուսապատճէնը)։